

ՀԱՂՈՐԴՈՒՄ REPORT СООБЩЕНИЕ

ՆԱԲԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

DOI: 10.57155/VBBM3512

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՐԶ ՎԵՐԾԱՆՈՒՄ, ԹԵ՛ ...^{*1}

Բանալի բառեր՝ Ձեռագիր, ընդարձակ նկարագրություն, հարցակարգ, հղման եղանակ, Մայր ցուցակ, գիտական բացահայտում, երեմիա Քյոմուրճյան, ինքնագիր:

«... բազմապատիկ աղետներն անցած և հային վշտակից մագաղաթները կամ Ձեռագիրները ցուցակագրելն ուրիշ բան չէ, ըստ իս, բայց եթե տալ անոնց ոսկր, մարմին և շունչ, նամանաւանդ կանգնեցնել զանոնք իբրեւ մի

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ավագ գիտաշխատող, պ. գ. թ., nvardanyan7@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 17 մայիսի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 6 հունիսի 2025:

* Սույն հոդվածը երիտասարդական 8-րդ (նվիրված Արտաշես Մաթևոսյանի 100-ամյակին, Երևան (Մատենադարան), 1-3 դեկտեմբեր, 2022 թ.) և Միջնադարագիտական 10-րդ (Երևան (Մատենադարան), 28-30 նոյեմբեր, 2024 թ.) միջազգային գիտաժողովներին ներկայացրած «Ձեռագրերի նկարագրությունը և գիտական բացահայտումները» և «Հայերեն ձեռագրերի նկարագրությունը երեկ, այսօր և վաղը» զեկուցումներիս նյութերի մեկտեղումն է:

¹ Հոդվածը հարգանքի տուրք է այն նվիրյալների հիշատակին, որոնց անխնայ ջանքերի շնորհիվ տասնամյակներ շարունակ նկարագրվել են հայերեն ձեռագրերը, կազմվել և ամբողջացվել են ձեռագրացուցակները՝ ընդարձակ թե համառոտ, տպագիր թե անտիպ, մասնավորապես՝ Մաշտոցյան Մատենադարանի երկարամյա (1978-1995, 2001-2023 թթ.) գլխավոր ավանդակալ, 2011-2023 թթ. Ձեռագրագիտության բաժնի վարիչ **Գևորգ Տեր-Վարդանյանի** հիշատակին: Գիտական բազմաբեղուն վաստակից զատ, նրա կարևորագույն ձեռքբերումներից են Մատենադարանի հիմնադրումից ի վեր գործող Ձեռագրագիտության բաժնի վերակազմակերպումը, երիտասարդ մասնագետների վերապատրաստումը և դրա շնորհիվ նաև «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անունի Մատենադարանի» բազմամատուցակի՝ հաստատված ավանդույթների ու սկզբունքների պահպանմամբ և վերամշակմամբ օր օրի առավել կատարելագործված հատորների տպագրությունը:

նոր եւ խօսուն վկաներ՝ հայի անցեալ մեծագործութեան եւ փառքին, եւ եթէ մարթ է՝ անոր պատմութիւնը ամբողջացնել ինչ ինչ փուլերովը»²:

Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեան (1852-1921)

Աշխարհով մեկ սփռված հայերեն ձեռագրերից յուրաքանչյուրը (առանց բացառության) յուրովի կարեւոր է հայոց բազմադարյա պատմության և մշակույթի արժեւորման ու ուսումնասիրման համար:

Յուրաքանչյուր ձեռագիր, լինի դա բարձրարժեք նկարագրողումներով առատ Աստվածաշունչ կամ Ավետարան, փիլիսոփայական, աստվածաբանական, տոմարագիտական, բժշկագիտական և տարաբնույթ այլ նյութեր պարունակող ժողովածու, Ախթարք, Հմայիլ կամ Ժէ-ԺԹ դարերի անկանոն, խառնի-խուռն հավաքածու³, հայոց պատմության, հոգեւոր ու նյութական մշակույթի անսպառ շտեմարանի անքակտելի մասնիկն է: Ձեռագրերում ամփոփված, երբեմն նաև թաքնված անթիվ ու անհամար տեղեկությունների վերհանման ամենագործուն ու արդյունավետ միջոցը, իհարկե, այդ գրչագրերի նկարագրությունն է, մասնավորապես ընդարձակ կամ լեռն խաչիկյանի բնորոշմամբ՝ «գիտական նկարագրությունը»⁴: Յուրաքանչյուր գրչագրի, այդ թվում նաև պատա-

² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետ՝ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ), Կ. Ս., յօրինեց՝ Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, «Ներածութիւն», Վենետիկ, 1914, էջ Թ:

³ Հարկ է ընդծել, որ շկան առավել կամ պակաս արժեքավոր ձեռագրեր: Կարևոր են անգամ Ախթարքներն ու Ժէ-ԺԹ դարերի անկանոն, խառնիխուռն ժողովածուները, որոնց նկարագրությունը երբեմն տաժանակիւր աշխատանքի է վերածվում: Սակայն դրանք պարունակում են ուշագրավ, բացառիկ նյութեր ժողովրդական՝ անգամ մինչև նախաբիրստոնեական շրջանն հասնող սովորույթների, հավատալիքների և աշխարհընկալման վերաբերյալ: Նշենք հմայական և ախթարական ձեռագրերում հեթանոսական շրջանի սովորույթներին, հավատալիքներին, նախամեսոպոյան գրին առնչվող արձագանքների, վկայությունների ուսումնասիրության ընդամենը մեկ օրինակ. Լ. Խաչիկյան, «Նախամեսոպոյան գրի հարցը և հմայագրերը», ՊԲՀ, 1963, № 4, էջ 145-157:

⁴ Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանի հիմնադիր տնօրենն իր հոդվածներում խիստ կարևորում է ձեռագրերի գիտական նկարագրությունն ու ցուցակագրումը՝ որպես ուղեցույց ընդունելով միջնադարյան գրչի «Գիրք փակեալ կոտմ են» արտահայտությունը: Ներկայացնելով Մատենադարանում տվյալ պահին կատարված ձեռագրերի ցուցակագրման նախնական արդյունքները՝ գույքամատյաններ, փառաբաններ, քեմատիկ ուղեցույց ցուցակներ, թեկուզ և նախնական, ոչ ամբողջական այդ նկարագրությունների հիման վրա իրականացված գիտական հսկայածավալ աշխատանքները՝ ընդգծում է «ձեռագրերի տպագիր Մայր ցուցակ» ունենալու հրամայականը. տե՛ս Լևոն Խաչիկյան, «Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին», ԲՄ, 4, 1958, էջ 16-22, նաև Ռույնի՝ «Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանը»», ՊԲՀ, 1959, № 2-3, էջ 381-384, 387:

ռիկի նկարագրություն հարստացնում է մեր հոգևոր շտեմարանի գունապնակը նորանոր գույներով ու մասնավոր պատկերներով, որոնց միմյանց սոսնձելու, պատկերն ամբողջացնելու դերը վերապահված է գիտական ուսումնասիրություններին: Այդ ուսումնասիրությունների գերխնդիրն է հատկապես լրացնել, գունավորել սույն շտեմարանի դատարկ կամ վնասված հատվածները, որ առաջացել են մեր գրավոր ժառանգության՝ պատերազմների, բնական աղետների, ինչու չէ նաև մեր իսկ անփութության և անուշադրության պատճառով դարեր շարունակ տեղի ունեցած անդառնալի կորուստներով⁵: Հետևաբար, ձեռագրերի գիտական նկարագրության մեջ արտացոլված համակողմանի տեղեկությունները, բնագրագիտական, աղբյուրագիտական նորանոր բացահայտումները հնարավորություն են ընձեռում ուսումնասիրողներին վերհանել մեր պատմության ու մշակույթի դեռևս անհայտ էջերը, վերարժեքել արդեն հայտնի կամ վիճահարույց փաստերը: Ձեռագրերի նկարագրության ընթացքում անգամ մեկ նոր բառի հայտնաբերումը կամ արդեն իսկ «ծանոթ» բառի վերաբացահայտումն ունակ է լիովին փոխելու մեր պատկերացումներն ու ընկալումները, մինչ այդ ընդունված գիտական տեսակետները⁶:

Իհարկե, անհնարին է մեկ հոգվածի սահմաններում ներկայացնել ժԸ-ԺԹ դարերից սկիզբ առած և հետագա դարերում պարբերաբար փոփոխված հայերեն ձեռագրերի նկարագրության և ցուցակագրման ողջ պատմությունը,

⁵ Մատենագրական երկերում, հիշատակարաններում և աղբյուրային փաստաթղթերում արձանագրված այդ կորուստների մասին ուսումնասիրողների որոշ անդրադարձներ տես **Լ. Խաչիկյան**, «Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին», էջ 7-9, 13-15, **Սուրեն Քոչանյան**, «Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները», էջմիածին, 1965, Բ-Դ, էջ 96-107, Ե-Է, էջ 133-144, 1966, Ը, էջ 27-37, Թ-Ժ, էջ 88-93, 1967, Ե, էջ 46-57, Զ, էջ 50-55, ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետ՝ *Ցուցակ ձեռագրաց*), հ. Ա, կազմ.՝ **Օննիկ Եգանյան**, **Անդրանիկ Զեյթունյան**, **Փայլակ Անթաթյան**, «Ներածություն»՝ **Օննիկ Եգանյանի**, Երևան, 1965, պլոմ. 20-27, 31, 43-44, 93-99 և այլուր, *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի* (այսուհետ՝ *Մայր ցուցակ ձեռագրաց*), հ. Ա, կազմ.՝ **Օ. Եգանյան**, **Ա. Զեյթունյան**, **Փ. Անթաթյան**, «Ներածություն»՝ **Ասատուր Մնացականյանի**, Երևան, 1984, էջ Է-Թ, ԺԹ-ԻԶ, ԼԱ-ԼԲ, ԼԴ-ԼԷ, **Սուրեն Գոյանենեան**, **Յովհաննէս վարդապետ Հիսեան**, **Բարգէն աթոռակից կաթողիկոս Կիլեսերեան**, **Գեորգ Տէր-Վարդանեան**, **Նդեռնր** և մեր ձեռագրերի կորուստն ու փրկությունները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015, **Լուսինե Թումանյան**, **Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները**, Երևան, 2019, էջ 284-305 և այլն:

⁶ Կարծում եմ, առավել քան խոսում են Հ. Բարսեղ Սարգիսյանի՝ հայերեն ձեռագրերի նկարագրության և ձեռագրացուցակների կարևորությունն ընդգծող հետևյալ տողերը. «... Եթե ժԸ. դարում առձեռն պատրաստ ունենային տպագրուած այժմու ազգային Ձեռագրաց ցուցակները, Չափեաններ, Իննիսեաններ եւ ամէն բան մանր պրպտող ու տաղանդաւոր ուրիշ մեծ վաստակատուներն, անշուշտ յոյժ այլազգ պիտի գրէին իրենց Պատմագրութիւնները, Հնախօսութիւններն եւ այլ գործերը» (*Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ*, հ. Ա., «Ներածութիւն»՝ **Հ. Բարսեղ վ. Սարգիսեանի**, էջ ԺԱ):

առանձնահատկությունները և դժվարությունները: Ուստի Մաշտոցյան Մատենադարանի «Մայր ցուցակ ձեռագրաց» բազմահատորյակի համար կատարվող ընդարձակ նկարագրությունների օրինակով, անցյալից եկող զուգահեռներով կփորձեմ ցույց տալ ձեռագրերի գիտական նկարագրության որոշ առանձնահատկություններ՝ ընդգծելով այդօրինակ նկարագրությունների դերն ու նշանակությունը գիտական արդյունավետ աշխատանքի և նոր բացահայտումների գործում:

Հայերեն ձեռագրերի ընդարձակ նկարագրության առանձնահատկություններ

Ձեռագիր մատյանների և դրանցում մեկտեղված տարատեսակ նյութերի առաջին ուսումնասիրողներն այդ մատյանների նկարագրողներն են: Հակոբոս Տաշյան⁷, Բարսեղ Սարգիսյան⁸, Նորայր Պողարյան⁹, Օննիկ Եգանյան, Անդրանիկ Զեյթունյան, Փայլակ Անթաբյան, Ասատուր Մնացականյան¹⁰ և բազում այլ նվիրյալներ. անվանի գիտնականներ, որոնց կազմած ձեռագրացուցակներն անկունաքարային նշանակություն ունեն հայագիտության տարբեր բնագավառների հետազոտության համար:

Մաշտոցյան Մատենադարանի «Մայր ցուցակ ձեռագրաց» բազմահատորյակի համար կատարվող ձեռագրերի ընդարձակ նկարագրությունն այս

⁷ Հ. Տաշյանի կազմած *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա* (հ. Ա, Վիեննա, 1895) ձեռագրացուցակը Ա. Մնացականյանն անվանում է «կոթողային աշխատություն» և հավելում, որ այն ձեռագրերի նկարագրության համար մշակված հարուստ հարցակարգի և հեղինակի մանրակրկիտ աշխատանքի ու բազմաբնույթ ծանոթագրությունների շնորհիվ «ոչ միայն իրենից առաջ, այլև իրենից հետո եղավ ու մնաց չգերազանցված»՝ դառնալով «հայ ձեռագրացուցակաստեղծման բարձրակետը» (տե՛ս *Մայր ցուցակ ձեռագրաց*, հ. Ա, «Ներածություն»՝ Ա. Մնացականյանի, էջ ԽԲ-ԽԳ):

⁸ Բ. Սարգիսյանի կազմած ձեռագրացուցակներից առանձնացնեմ հատկապես Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրացուցակի Բ հատորը: Այս հատորում նկարագրված ձառընտիրների միավորների մեծ մասը օժտված է ծանոթագրություններով, որտեղ վաստակավոր գիտնականը նշում է ոչ միայն բնագրի հայերեն տարբերակի տպագրված լինել կամ չլինելու հանգամանք, այլև տեղեկություններ է հաղորդում տվյալ բնագրի հումարեն, ասորերեն, լատիներեն տարբերակների մասին և պարզաբանում, թե հայերեն բնագիրը որ տարբերակից է թարգմանվել (տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վենետիկ*, հ. Բ, յօրինեց՝ Հ. Բ. Վ. Սարգիսյան, Վենետիկ, 1924, սիւն. 2-576):

⁹ Վաստակաշատ գիտնականի տփնաշան աշխատանքի արդյունքն են Երուսաղեմի Սբրոց Հակոբյանց վանքում պահվող գրչագրերի ձեռագրացուցակի՝ 1966-1991 թվականները տպագրված տասնմեկ ստվարաձավալ հատորները:

¹⁰ Ձեռագրագետների այս խումբն իր անուրանալի ավանդն ունի Մաշտոցյան Մատենադարանի թե՛ համառոտ, թե՛ ընդարձակ ձեռագրացուցակների կազմման, հարցակարգերի մշակման և հրատարակման գործում (առավել մանրամասն տե՛ս *Մայր ցուցակ ձեռագրաց*, հ. Ա, «Ներածություն»՝ Ա. Մնացականյանի, էջ ԽԵ-ԾԳ):

պահին իրականացվում է մի քանի փուլով. նախ կատարվում է ձեռագրի առաջին նկարագրությունը, որի ընթացքում նկարագրողը հնարավորինս մանրամասն արձանագրում է ձեռագրին առնչվող բոլոր տվյալները, ապա տպագրությունից առաջ իրականացվում է երկրորդ նկարագրությունը, որի ընթացքում, ըստ անհրաժեշտության, սրբագրվում, ուղղվում, լրացվում են առաջին նկարագրության ժամանակ արձանագրված տեղեկությունները¹¹:

Ստորև թվարկեմք ձեռագրերի ընդարձակ նկարագրության մի փամի առանձնահատկություն.

1. Առաջինը և գլխավորը, մշտապես սովորելու, նոր գիտելիքներ ձեռք բերելու չընդհատվող, շարունակական գործընթացն է:

Ձեռագրերի ընդարձակ, գիտական նկարագրության ժամանակ նկարագրողը հաղթահարում է բազմաթիվ դժվարություններ, կատարում ձեռագրագիտական, աղբյուրագիտական, բնագրագիտական տարաբնույթ հետազոտություններ և բացահայտումներ: Նկարագրության շնորհիվ մենք առնչվում ենք հայագիտության տարբեր ճյուղերի հետ, ուսումնասիրում, ծանոթանում ձեռագրերում ընդգրկված բազմաբովանդակ նյութերին, որոնց այլ հանգամանքներում դժվար թերևս անդրադառնալինք, և սովորում: Սովորում ենք ձեռագրի գրչից, ստացողից, նորոգողից, ձեռագրում ընդօրինակված նյութերի բազմաշնորհ հեղինակներից: Եվ իհարկե, սովորում ենք միմյանցից՝ թե՛ ավագ¹², թե՛ կրտսեր մեր գործընկերներից: Ձեռագրագիտության բաժինը Մատենադարանի ամենամեծ գիտական բաժինն է. այստեղ աշխատում են բանասերներ, աստվածաբաններ, արվեստաբաններ, մշակութաբաններ: Նկարագրության ընթացքում առաջացած յուրաքանչյուր խնդրահարույց հարցի դեպքում լինում են քննարկում-

¹¹ Մայր ցուցակ ձեռագրաց-ի հետքական հատորի տպագրությունից առաջ առկա ընդարձակ նկարագրության՝ ժամանակի ընթացքում փոփոխված սկզբունքների համաձայն տվյալ ձեռագրի հետ համեմատությամբ վերանայումը, խմբագրումը, հաճախ նաև վերանկարագրումը եղանկանիշատակ Գևորգ Տեր-Վարդանյանի ներմուծած դրույքներից մեկն է (առավել մանրամասն տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, «Լեոն հաշիկեանի սկզբունքները եւ Մատենադարանի հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի պատրաստման ներկայ ընթացքն ու հետանկարները», Լեոն հաշիկյան. Հարյուրամյակ: Նյութեր ակադեմիկոս Լեոն հաշիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), Երևան, 2019, էջ 51):

¹² Առիթից օգտվելով՝ խորին շնորհակալությամբ պետք է նշեմ, որ ես, օրինակ, նախ սովորել, ձեռագրագիտական հիմնական գիտելիքներ ստացել եմ Մատենադարանի ավագ գիտաշխատողներ Արփենիկ Ղազարոսյանից, եղանկանիշատակ Վարդան Դերիկյանից, բաժնի նախկին վարիչներ Հակոբ Քեռսեյանից, Գևորգ Տեր-Վարդանյանից:

ներ, պարզաբանումներ, որոնց շնորհիվ ևս հարստանում է գիտելիքների մեր պաշարը:

Նկարագրության ընթացքում, ձեռագրերում առկա, անցյալից վերհանող պատկերներն ու իրողությունները երբեմն իրենց արտացոլումն են գտնում ներկայում:

Այսպես՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում մենք հաճախ ենք հանդիպում գրիչների պարզաբանող բացատրությունների, թե ինչ խոչընդոտների են իրենք բախվել, ինչ դժվարություններ են հաղթահարել այս կամ այն գրչագիրն ընդօրինակելիս:

Օրինակ՝ նկարագրածս կանոնադրական ժողովածուներից մեկի՝ ՄՄ 6496 (Ագուլիս, 1637 թ.)¹³ ձեռագրի գրիչ Գրիգոր դպիրը հիշատակարանում մանրամասն ներկայացնում է նմանատիպ դժվարություններ: Ձեռքի տակ ունենալով երկու գաղափար օրինակ, որոնցից մեկը սխալաշատ է, մյուսը՝ եղծված և գրչի խոսքերով «խիստ խառնաբերթոշ է, ինչպէս որ մածոնն, թանն և չորթանն (այս և հետագա ընդգծումները մերն են - Ն. Վ.)»¹⁴, փորձում է այդ երկու գրչագրերի համեմատության միջոցով հնարավորինս անսխալ ընդօրինակել իր ձեռագիրը՝ ինչպես ինքն է նշում, ողջ ընթացքում «վարանելով, կսկծալի արտասուքով և տառապելով»:

Առդ, աղաչեմ զձեզ, եղբայրք, լուարոյք ինձ եւ ունկնդիր լեռոյք իմոյ բանիս... **Նոր կիրակէին սկիզբն արարաք, Յայտնութեան պահոց շաբաթօրն յազի կարացաք աւարտել, շնի թէ մեղադրէք կամ պարսաւք անդարձ [տարագր]եալս, անգղջական զառա[ծեալս], անմխիթար տրամեալս, իմֆնագրաւ գերեալս Ես այնպէս վարանէի, կսկծալի արտասուքի, բայց մարդոյ ոչ յա[յտնէ]ի, ես իմում անձին գլորէի եւ յԱստուած ապաւին[էի], նոր արինակն ձախ կողմս դնէի, ի գիրն հայէի, շատ սխալ ի միջի տեսան[էի], յերեսս դարձուցանէի դէպ յԱստուած ակնարկէի, հին օրինակն աջակողմս դնէի, ստուգութիւն ի միջի տեսանէի, սրտով սատաթ (= ուրախ, երջանիկ)¹⁵ լինէի...**¹⁶:

¹³ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուդակ ձեռագրաց*, հ. Բ, կազմ.՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1970, սյուն. 331-332, նկարագրող Փայլակ Անթաթյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի Մայր ցուցակ ձեռագրաց-ի համապատասխան հատորում:

¹⁴ ՄՄ 6496, 110բ-1ա:

¹⁵ Բառի բացատրությունն Անի Ժ. Ավետիսյանի:

¹⁶ ՄՄ 6496, 424բ, հմմտ. *Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարանները (1621-1640 թթ.)*, հ. Բ, կազմ.՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 684-685:

Ձեռագրագիտության բաժնի յուրաքանչյուր աշխատակից կարող է բազմաթիվ օրինակներ բերել, երբ ինքը ևս հայտնվել է սույն ձեռագրի տառապյալ գրչի իրավիճակում: Երբ ձեռագրերում ընդօրինակված բնագրերը, առկա տեղեկությունները կասկածի, մտորումների տեղիք են տվել, երբ հարկ է եղել դրանք պարզաբանելու, ճշգրտելու համար կարդալ, պրպտել ոչ միայն տպագիր ուսումնասիրություններ ու բնագրեր, այլև համեմատել նույնաբովանդակ մի քանի գրչագիր: Եվ ինչպես վերոնշյալ ձեռագիրը գրիչն ընդօրինակել է ամիսներ շարունակ՝ մոտավորապես ութ ամիս¹⁷, այնպես էլ ձեռագրի նկարագրությունը, նույնիսկ եթե դա Ավետարան է, Սաղմոսարան կամ Ժամագիրք, կարող է տեղի օրեր, շաբաթներ և անգամ ամիսներ: Քանզի շատ դեպքերում հարկ է լինում վերանայել նկարագրության որոշ սկզբունքներ և առանձին ձեռագրերի դեպքում մշակել նկարագրության նոր ձև, նոր մոտեցում:

Այսպես՝ ՄՄ 4376 ձեռագրի (Կ. Պոլիս (Ա), 1636 թ. (Ա), Ժէ դ. (Բ))¹⁸ երկրորդ նկարագրության ընթացքում, որ տեղի է մեկուկես ամիս, մեր գործընկեր Տաթևիկ Ստեփանյանը բախվեց մի իրողության, որ յուրահատուկ լուծում էր պահանջում այնպիսի կանոնավոր բնագրերի պարագայում, ինչպիսիք են Ժամագիրքն ու Սաղմոսարանը: Այս ձեռագրում տվյալ միավորները ընդօրինակել էին երկու տարբեր գրիչներ: Երկրորդ գրիչը (անունը չի պահպանվել), Ժամագրքի որոշ հատվածներում սաղմոսներն ընդօրինակելու փոխարեն, գերադասել էր պոկել առաջին գրչի՝ Յակոբ սարկավագի ընդօրինակած Սաղմոսարանի համապատասխան թերթերը և տեղադրել իր ընդօրինակած Ժամագրքի ընթերցվելիք հատվածներում՝ լվանալով անգամ տեղափոխվող թերթերի բնագրային՝ իր կարծիքով «ավելորդ» տողերը: Առաջացած երկընտրանքը՝ պոկված թերթերը նկարագրել որպես Սաղմոսարանի՞, թե՞ Ժամագրքի բաղկացուցիչ մաս, հանգուցալուծվեց հետևյալ կերպ: Տ. Ստեփանյանը խնդրո առարկա թերթերի բովանդակությունը որոշեց արտացոլել թե՛ Ժամագրքի, թե՛ Սաղմոսարանի հատվածում՝ համապատասխան ծանոթագրություններով, քանզի ձեռագրերի նկարագրության առանցքային նպատակն է հնարավորինս անխաթար արտացոլել ձեռագրի առկա վիճակը:

¹⁷ Ըստ Ժէ դարի հիշատակարանների 2-րդ հատորի կազմողների կատարած տումարական հաշվարկների՝ գրիչը ՄՄ 6496 ձեռագրի ընդօրինակությունը սկսել է 1636 թ. ապրիլի 24-ին և ավարտել 1637 թ. հունվարի 1-ին. տե՛ս Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարանները, հ. Բ, էջ 684, ծնթ. 7, էջ 685, ծնթ. 8:

¹⁸ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուդեական ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 1201, նկարագրող՝ Փ. Անթրաքյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրացի* համապատասխան հատորում:

Ինչ խոսք, ձեռագրացուցակներից օգտվելիս դժվար է պատկերացնել, որ կես կամ մի քանի էջ նկարագրությունն օրեր, շաբաթներ և նույնիսկ ամիսներ տևած աշխատանքի, պրպտումների, ուսումնասիրությունների արդյունք է, արձանագրված տվյալներն էլ շատ դեպքերում նկարագրողի բացահայտումներն են¹⁹:

2. Երկրորդ, կարևորագույն առանձնահատկությունը՝ ձեռագրերի ընդարձակ նկարագրությունը գիտական տարաբնույթ բացահայտումների անվերջանալի շղթա է:

Հնդգծենք՝ եթե նույնիսկ ձեռագիրը բնագրագիտական մեծ արժեք չունի, ապա ընդարձակ նկարագրության ընթացքում արձանագրված աղբյուրագիտական, պատմագիտական կարևորագույն տեղեկությունները հնարավորություն են ընձեռում նոր լույսի ներքո իրականացնելու այս կամ այն նյութի ուսումնասիրությունը: Եթե անգամ ձեռագիրը տասնամյակներ շարունակ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, ընդարձակ նկարագրությունը նոր պարզաբանումների աղբյուր կարող է հանդիսանալ, քանզի մեկ բառի արձանագրումն անգամ վճռորոշ դեր կարող է ունենալ վիճահարույց այս կամ այն խնդրի հանգուցալուծման համար:

Օրինակ՝ այդ նկարագրությունների շնորհիվ է, որ ՄՄ 2375 թվահամարի ձեռագիրը (Ժ դ.)²⁰ ժամանակի և հողի փոշու շերտի մեջ քարացած ցուցանմուշից վերածվեց Թեոդորիտոս Կյուրացու (Դ-ե դդ.) Սաղմոսաց մեկնության հայերեն թարգմանության փրկված պատառիկի²¹. նկարագրող՝ Լուսինե Թումանյան: Կամ՝ պարզվեց, որ ՄՄ 4744 ձեռագրի (Ծպատ, 1546 թ.)²² պատառիկ-պահպանակը Հեթում Բ թագավորի (1286-1306 թթ.՝ ընդհատումներով) պատվերով ըն-

¹⁹ Հարկ է ընդգծել, որ եթե գիտական այլ աշխատանքների դեպքում նշածս հանգամանքներն օրինաչափ և հասկանալի են, ապա ձեռագրի նկարագրության պարագայում նկարագրողի բացահայտումները շատ հաճախ ընկալվում են որպես ձեռագրում արդեն իսկ առկա տեղեկությունների պարզ վերծանություն:

²⁰ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Ցուցակ ձեռագրաց, հ. Ա*, սյուն. 790, նկարագրող՝ **Անդրանիկ Զեյթունյան**, ընդարձակ նկարագրությունը՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. է, խմբ.՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Երեւան, 2012, սիւն. 1123-1124: Մեկ ամբողջական ձեռագրից պահպանված այս բառացած պատառիկը Հաղպատի ձորի Բարանձավներից մեկում 1873 թ. հայտնաբերել է հնագետ Աղեմսանդր Երիցյանը (տե՛ս նույն տեղերում):

²¹ *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի է հատորի սրբագրական աշխատանքների ընթացքում կատարված սույն բացահայտման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս **Շահեն աբղ. Անանյան, Լուսինե Թումանյան**, «Մատենադարանի Բարացած ձեռագիրը (ՄՄ Հ^մ 2375)» Թեոդորեոս Կյուրացու Սաղմոսաց մեկնության հայերեն թարգմանության մի նոր վկայություն», *ԲՄ*, 19, 2012, էջ 321-340:

²² Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Ցուցակ ձեռագրաց, հ. Ա*, սյուն. 1276, նկարագրող՝ **Փ. Անթարյան**, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

դորինակված Հայսմավուրքից փրկված եզակի թերթեր են²³։ նկարագրող՝ Քնար Հարությունյան։ Մատենադարանի 2079 թվահամարի ձեռագրի (ժողովածու, Լիմ, Ժէ դ.)²⁴ 410բ-413ա թերթերին ընդօրինակված հիշատակարան-բանաստեղծությունը համալրեց Մարտիրոս Մոկացու (Ժէ դ.) չափածո երկերի շարքը²⁵։ նկարագրող՝ Տաթևիկ Մանուկյան։ ՄՄ 7734 գրչագրի (Ավետարան, Բարջանճա անապատ, 1219 թ.) պատառիկ-պահպանակը Դանիել մարգարեի Տեսիլի մեկնությունից²⁶ վերածվեց Կյուրեղ Երուսաղեմացու (~ 313 – ~ 386 թթ.) «Կոչումն ընծայութեան» երկի՝ Թ-Ժ դարերի ընդօրինակության մի փրկված մասունքի²⁷։ նկարագրող՝ Մարինե Սարգսյան։ Ընդարձակ նկարագրության ժամանակ 290 թերթից բաղկացած ՄՄ 4890 ժողովածուում (Աղթամար, 1313 թ.)²⁸ ընդօրինակված «Ծխանի» բառի արձանագրումը թույլ տվեց վերաքննել բառի մինչ այժմ ընդունված իմաստային նշանակությունը և ապացուցել, որ Ծխանին հայոց նախաքրիստոնեական շրջանից եկող, այդ ժամանակշրջանի տոմարի ու ծեսերի հետ սերտորեն փոխկապակցված և դարեր շարունակ «թաքնված» արձագանքն է²⁹։ նկարագրող՝ Նարինե Վարդանյան։

Նմանատիպ բացահայտումներ կամ պարզաբանումներ արվում են գրեթե յուրաքանչյուր ձեռագրի ընդարձակ նկարագրության ժամանակ։ Շատ դեպքերում դրանք առնչվում են հետազոտական այն աշխատանքներին, որ Ձեռագրագիտության բաժնի աշխատակիցները կատարում են ձեռագրերի նկարագրությանը զուգահեռ։ Շատ հաճախ էլ նկարագրության ընթացքում արված «պատահական» բացահայտումներն են դառնում մեր հետազոտության առարկան՝ երբեմն նաև պատճառ դառնալով շղթայական նորանոր բացահայտումների։

²³ Առավել մանրամասն տե՛ս Քնար Հարությունյան, «Հերոս Բ. արքայի մի անյայտ Յայսմատուրի նորայայտ մատուցը (ՄՄ Հ^մ 4744 ձեռագրի պատառիկ-պահպանակը)», *Էջմիածին*, 2016, Թ, էջ 96-115։

²⁴ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 714, նկարագրող՝ Ա. Զեթունյան, ընդարձակ նկարագրությունը՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մշտոցի անուան Մատենադարանի*, հ. 2, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, սյուն. 1377-1404։

²⁵ Տաթևիկ Մանուկյան, «Ժէ դարի տաղասաց Մարտիրոս Մոկացու մի չափածոն», *ԼՀԳ*, 2011, № 1-2, էջ 383-391։

²⁶ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Բ, սյուն. 600։

²⁷ Մարինե Սարգսյանի կատարած ընդարձակ նկարագրությունը լույս կտեսնի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում։

²⁸ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 1310, նկարագրող՝ Փ. Անթաբյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում։

²⁹ Նարինե Վարդանյան, «Ծխանի. Հայոց տոմարի մոռացված ամսանունը», *Նուրբ և լայն գրեանք. Տոնագիր. նվիրված է. Մ. Շիրինյանի 70-ամյակին*, Երևան, 2024, էջ 469-494։

Այսպես՝ Անի Առաքելյանը ՄՄ 3751 ձեռագիրը (Տփղիս, 1846-1859 թթ.)³⁰ նկարագրելիս պարզել է, որ ԺԹ դարի գրական, հասարակական գործիչ Գևորգ Ախվերդյանի (1818-1861 թթ.) շուրջ մեկուկես տասնամյակ տևած բանահավաքչական գործունեության արգասիք այս երգարանում կան միայն սույն ձեռագրում պահպանված անտիպ խաղեր և բանաստեղծություններ: Այս բացահայտումն էլ առիթ է հանդիսացել սկսել «Գևորգ Ախվերդյանի երգարանը (ՄՄ 3751). նորահայտ երգեր» խորագրով թեմայի հետազոտությունը³¹:

ՄՄ 2878 ձեռագրի (1869 թ, Թեոդոսիա)³² երկրորդ նկարագրության ընթացքում Հասմիկ Իրիցյանի ուշադրությունը գրավեց Գաբրիել Այվազյանի (Գ. Այվազովսկի, 1812-1880) «Բառազննութիւն աշխարհիկ լեզուի» երկի՝ մինչ այդ չուսումնասիրված բնագիրը, որն հետաքրքրություն առաջացրեց նաև հեղինակի նմանատիպ այլ գործերի հանդեպ: Այս պահին Հ. Իրիցյանը «Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) լեզվագիտական ժառանգությունը» թեմայի շրջանակներում իրականացնում է հայագիտության և լեզվաբանության բնագավառում հեղինակի տպագիր և ձեռագիր նյութերի հավաքումն ու ուսումնասիրությունը, ինչն էլ հնարավորություն կընձեռի համակողմանի ներկայացնելու Գաբրիել Այվազյանի ներդրումը հայերենագիտության մեջ³³:

«Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանի գործունեությունը և նորահայտ ստեղծագործությունները» խորագրով թեման Արմինե Մելքոնյանի համար ուսումնասիրության նյութ դարձավ ՄՄ 4677 Ճառքնորի³⁴ ընդարձակ նկարագրությունից հետո, երբ Ա. Մելքոնյանը Ժե դարում ընդօրինակված ձեռագրի ազատ թերթերից մեկին բացահայտեց բազմավաստակ վարդապետի ձեռքով գրված ինքնակենսագրական-հիշատակարանը, ուր արձանագրված էին Ղևոնդ Փիրղալեմյանի կյանքին ու գործունեությանը առնչվող և այլ աղբյուրներում բացակայող ուշագրավ տեղեկություններ: Այս փոքրիկ ինքնակենսագրականի շնորհիվ և պահպանված այլ վկայությունների հետքերով Ա. Մելքոնյանին հաջողվել է բա-

³⁰ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 1075-1076, նկարագրող՝ Փ. Անթաթյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի ԺԲ հատորում:

³¹ Թեմային առնչվող ուսումնասիրությունների և բնագրերի մի մասն ամփոփված է Ա. Առաքելյանի մի շարք հոդվածներում և զեկուցումներում, տե՛ս Հավելված:

³² Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 894, նկարագրող՝ Ա. Զեյթունյան, ընդարձակ նկարագրությունը՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Թ, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2017, սիւն. 1063-1068:

³³ Հ. Իրիցյանի՝ թեմային վերաբերող հոդվածներն ու զեկուցումները տե՛ս Հավելված:

³⁴ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուզակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 297, նկարագրող՝ Փ. Անթաթյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

ցահայտել Փիրղալեմյանի մինչ օրս կորած համարվող, ավելին, նույնիսկ անհայտ մի շարք աշխատություններ³⁵:

ՄՄ 6333 գրչագրի (Կտուց, Լիմ, Վարագ, 1906-1907 թթ.)³⁶ ընդարձակ նկարագրությունից հետո Դավիթ Ղազարյանը ձեռնամուխ եղավ ձեռագրի գրիչ և հեղինակ Հովհաննես (Օնիկ) Բարաղամյանի «Յուցակ ձեռագրաց Վասպուրականի» 475 միավորից բաղկացած անտիպ ձեռագրացուցակի բնագրի կազմման և հրատարակության պատրաստման աշխատանքներին: Իրականացվող հետազոտության շրջանակում Դ. Ղազարյանը, շարունակելով Օնիկի եզանյանի սկսած գործը, փորձում է նույնականացնել ցուցակում օգտագործված ձեռագրերը Մատենադարանում և այլ պահոցներում գտնվող գրչագրերի հետ, պահպանված վկայությունների հիման վրա հաստակեցնել նաև Օնիկ Բարաղամյանի կենսագրական որոշ տվյալներ (օրինակ՝ ծննդյան և մահվան թվականները և այլն):

Գայանե Խաչատրյանն իր նկարագրած ՄՄ 9132 ձեռագրի (Շուշի, 1851 թ.)³⁷ հիման վրա կազմում է ժԹ դարի հեղինակ, ուսուցիչ Հարություն քահանա Մելքոնյանցի «Փոքր քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատության բնագիրը: ՄՄ 9132 գրչագիրն այս երկի միակ ընդօրինակությունն է, հեղինակի ինքնագիր օրինակը: Բնագրի մանրամասն քննությունից հետո Գ. Խաչատրյանը պարզել է, որ ժԹ դարում հարց ու պատասխանի տեսքով կազմված դասագրքի հետաքրքիր այս նմուշի էական-տարբերակիչ առանձնահատկությունը հեղինակի՝ Հարություն Մելքոնյանցի ուշագրավ ծանոթագրություններ և մանկավարժական ցուցումներ պարունակող ամփոփումներն են³⁸:

Գիտական նմանատիպ բացահայտումների թվարկումը կարելի էր երկար շարունակել. սրանք ընդամենը մեր առանձնացրած հատուկենտ օրինակներն են:

Հարկ է նշել նաև, որ թեև նկարագրության ընթացքում արված բացահայտումների աննշան մասն են նկարագրողներն օգտագործում որպես սեփական ուսումնասիրության նյութ, այնուամենայնիվ, դա ևս բավականին ծանրակշիռ արդյունք է: Այսպես՝ 2010 թվականից մինչ օրս Ձեռագրագիտության բաժնի

³⁵ Ա. Մելոնյանի բացահայտումներն արտացոլող հոդվածներն ու զեկուցումները տե՛ս Հավելված:

³⁶ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս Յուցակ ձեռագրաց, հ. Բ, սյուն. 1260-1261, նկարագրող՝ **Փ. Անթաբյան**, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի Մայր ցուցակ ձեռագրացի համապատասխան հատորում:

³⁷ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս Յուցակ ձեռագրաց, հ. Բ, սյուն. 877, նկարագրող՝ **Օ. Եզանյան**:

³⁸ Ձեռագրի ընդարձակ նկարագրությունը և Գ. Խաչատրյանի ուսումնասիրության որոշ արդյունքներն արտացոլող համապատասխան հոդվածը տե՛ս Հավելված:

երիտասարդ աշխատակիցները³⁹ բացառապես ձեռագրերի նկարագրության ընթացքում ի հայտ եկած նոր տվյալների և տեղեկությունների հիման վրա հրատարակել են մի շարք մենագրություններ և բնագրեր, հեղինակել մոտ ութսուն հոդված, ներակայացրել հինգ տասնյակից ավել զեկուցումներ հայաստանյան և միջազգային գիտաժողովներում⁴⁰:

Այսու՝ ընդարձակ նկարագրության ժամանակ կատարված բացահայտումների հիմնական մասը նկարագրության հետ միասին տպագրվում է ներկայացվում է ուսումնասիրողներին՝ հնարավորություն ընձեռելով այս կամ այն թեմայի հետազոտողին ունենալ առավել ամբողջական, համապարփակ պատկեր ուսումնասիրվող նյութի վերաբերյալ:

3. Ընդարձակ նկարագրության երրորդ, ուշագրավ առանձնահատկությունը համատեղ աշխատանքն է:

Ձեռագրերի ընդարձակ նկարագրությունը Մատենադարանի տարբեր բաժինների, հայագիտական տարբեր կենտրոնների աշխատակիցների հետ համագործակցության, միասնական աշխատանքի լավագույն օրինակ է:

ա. Սերտ համագործակցություն Մատենադարանի Վերականգնման բաժնի մեր գործընկերների հետ: Եթե նախկինում՝ հատկապես Ի դարի կեսերին (1950-1960-ական թթ.) կատարված վերականգնումները, հիմնականում, միայն արտաքին թերությունների վերացումն էին ենթադրում (ունենք անգամ գլխիվայր կամ հակառակ փակցված թերթեր), ապա այսօր Վերականգնման բաժնի մեր փորձառու գործընկերների և Ձեռագրագիտության բաժնի աշխատակիցների համագործակցության շնորհիվ վերացվում են ոչ միայն ձեռագրերի ֆիզիկական թերությունները, այլև շտկվում են բնագրային խառնաշփոթները, որ առաջացել են ժամանակի ընթացքում թերթերի ոչ ճիշտ դասավորվածությունից, սխալ տեղադրումից:

³⁹ Մատենադարանի, այդ թվում նաև Ձեռագրագիտության բաժնի՝ սերնդափոխության մի կարևոր փուլ սկսվեց 2007 թվականից՝ Մատենադարանի բարեփիշատակ տնօրեն **Հրաչյա Թամրազյանի** ջանքերով: Սույն հոդվածի բովանդակությունը կառծես հավաստումն է նրա՝ Մայր ցուցակ ձեռագրացի Դ հատորի Առաջաբանում արտահայտած հետևյալ մտքի. «Մայր Յուզակի կազմման աշխատանքներին հին ձեռագրագետների հետ մասնակցում են բազմաթիվ նոր երիտասարդ աշխատակիցներ, որը վկայում է **աանդրոյթի պահպանման և զարգացման նոր ընթացքի մասին**» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, հ. Դ, կազմ.՝ Ա. Քեռշեհեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեռշեան, «Ներածութիւն»՝ Հր. Թամրազյան, Երևան, 2008, սիւն. 8):

⁴⁰ Ձեռագրագետների նոր սերնդի՝ նկարագրությունների ընթացքում կատարած բացահայտումների հիման վրա իրականացված ուսումնասիրությունները (տպագիր աշխատություններ և զեկուցումներ) մեկտեղված են հոդվածին կից ներկայացված **Հավելվածում**: Շնորհակալություն գործընկերներին համապատասխան տեղեկություններ տրամադրելու համար:

Վերականգնվող յուրաքանչյուր ձեռագիր, եթե արդեն նկարագրված չէ, ապա կամ նկարագրվում է, այնուհետև վերականգնվում, կամ էլ վերականգնողը, թերթերը դասավորելուց հետո, խորհրդակցում է Ձեռագրագիտության բաժնի աշխատակիցների հետ, այնուհետև կազմում ձեռագիրը:

Վերոնշյալ համագործակցության վառ օրինակներ են ՄՄ 6295 և ՄՄ 4674 գրչագրերը:

Առանձին թերթերից և այդ թերթերի ծվեններից բաղկացած ՄՄ 6295 ճաշոցը (1436 թ.)⁴¹ նախ մանրամասն նկարագրել է Ձեռագրագիտության բաժնի գիտական աշխատող Հասմիկ Իրիցյանը, ապա այն վերականգնել է ավագ վերականգնող Լիլիթ Բաշաշյանը: Սույն գրչագրի պարագայում հստակ կարելի է ասել (տե՛ս նկար 4, 5), որ նկարագրող Հ. Իրիցյանի և վերականգնող Լ. Բաշաշյանի կատարած ոսկերչական աշխատանքի շնորհիվ ՄՄ 6295 գրչագիրը վերածնվել է⁴²:

ՄՄ 4674 մեծագիր գրչագրի (Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն Թղթոցն Կաթուղիկեայց, Աղթամար, 1333 թ.)⁴³ դեպքում էլ ավագ վերականգնող Նարինե Քալանթարյանը ձեռագրի թերթերը նորոգելուց և դասավորելուց հետո խորհրդակցել է Ձեռագրագիտության բաժնի ավագ գիտաշխատող, այս գրչագրի ապագա նկարագրող՝ Արմինե Մելքոնյանի հետ, և ապա նոր սկսել ձեռագրի կազմման աշխատանքները:

Բ. նկարագրվող ձեռագրերում հաճախ հանդիպում են այլալեզու ձեռագրերի պատառիկներ, այլալեզու գրառումներ, որոնք վերծանում են տվյալ լեզվի գիտակ մեր գործընկերները. հին հունարենի, լատիներենի դեպքում մեզ օգնում են մեր ավագ գործընկերներ Գոհար Մուրադյանը, Օլգա Վարդազարյանը, պարսկերեն, արաբերեն, օսմաներեն, քրդերեն, ղփչաղերեն գրառումների պա-

⁴¹ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուցակ ձեռագրաց*, հ. Բ, սյուն. 289-290, նկարագրող՝ Փ. Անթաբյան:

⁴² Փ. Անթաբյանը 1970 թ. ձեռագրի համառոտ նկարագրությանը կից թողել է հետևյալ ծանոթագրությունը. «Քայքայված լինելու պատճառով առայժմ հնարավոր չէ թերթերի փանակն ու հիշատակարանի էջերը ստույգ ցույց տալ» (տե՛ս *Յուցակ ձեռագրաց*, հ. Բ, սյուն. 290): Այսու, կարծում եմ ձեռագրի վերածննդի վերաբերյալ մեր պնդումն ամենևին էլ չափազանցված չէ, քանզի ժե դարում ստեղծված ձեռագրից մեզ հասած հատվածները երկար տարիներ առանձին թղթապանակում պահվելուց հետո, ԻՍ. դարում վերադասավորվել, թերթակալվել և կրկին կազմվել են՝ «ի մի տփի» (արտահայտությունը փոխառված միջնադարյան կազմողներից): Ձեռագրի ընդարձակ, գիտական նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

⁴³ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուցակ ձեռագրաց*, հ. Ա, սյուն. 1259, նկարագրող՝ Փ. Անթաբյան, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

րագայում՝ Մատենադարանի Արևելագիտության բաժնի աշխատակիցները, մասնավորապես Անի Ժ. Ավետիսյանը, Քրիստինե Կոստիկյանը, Վեներա Մակարյանը, Հասմիկ Կիրակոսյանը և ուրիշներ, ռուսերենի դեպքում՝ Լուսիկ Ստեփանյանը, իսկ վրացերեն պատառիկներն ու գրառումները վերծանում է Ֆրանսիացի հայագետ Բեռնար Ուտինեն:

Ք. Նկարագրության ընթացքում առաջացած խնդրահարույց հարցերի դեպքում խորհրդակցում, համագործակցում ենք նաև Մատենադարանի գիտական այլ բաժինների աշխատակիցների հետ, քանզի այս կամ այն թեմայի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետի հետ խորհրդակցությունը ոչ միայն առավել ճշգրիտ, գրագետ նկարագրություն է ապահովում, այլև նորանոր բացահայտումների, ճշգրտումների աղբյուր դառնում:

Օրինակ՝ ՄՄ 8458 Ժողովածուի (Ժէ դ.)⁴⁴ նկարագրության ժամանակ ԺԲ դարի ասորի բժիշկ Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» բնագրի՝ մարդու բերանի և ատամների ստեղծմանը նվիրված ենթագլխի համեմատության ժամանակ պարզվեց, որ սույն ձեռագրում առաջին տողն է միայն վերոնշյալ բնագրի մաս կազմում, շարունակությունը՝ բոլորովին այլ բովանդակությամբ մեկ այլ բնագրից է⁴⁵ (տե՛ս նկար 6): Մարդու կազմությանը նվիրված տպագիր հնարավոր բոլոր գործերի հետ համեմատությունն ապարդյուն էր: Մեր խնդրանքով Մատենադարանի Բժշկագիտության և բնագիտության պատմության խմբի աշխատակից Կարինե Մոսիկյանը բնագրի այդ հատվածը բաղդատեց նմանատիպ երկերի՝ իր ձեռքի տակ եղած անտիպ բնագրերի հետ և հստակեցրեց, որ վերոնշյալ ենթագլխի շարունակությունը Գրիգոր Նյուսացուն (~ 335 – ~ 394) վերագրվող «Ի չորից գոյացեալ» բնագրի մի մասն է: Այն այստեղ ընդօրինակվել էր Աբուսայիդի երկին կից, միակտուր, որպես մեկ ամբողջական բնագիր: Պատճառը թերևս, գաղափար օրինակի թերթերի թափվածությունն էր եղել, ինչն էլ ՄՄ 8458 ձեռագրի գրիչը, չնկատելով, մեխանիկորեն ընդօրինակել և իրար էր կցել այս երկու գործերը:

Այսպիսով վերոնշյալ համագործակցության շնորհիվ գրչի այս շփոթը պարզաբանվեց, և հետագոտողները հնարավորություն ստացան ուսումնասիրելու «Ի չորից գոյացեալ» բնագրի՝ ՄՄ 8458 ձեռագրի էջերում թաքնված այս տարբերակը ևս:

⁴⁴ Զեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Յուլյակ ձեռագրաց*, հ. Բ, սյուն. 749, նկարագրող՝ Օ. Եգանյան, ընդարձակ նկարագրությունը՝ համապատասխան ծանոթագրություններով, կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

⁴⁵ ՄՄ 8458, ք. 35ա-44ա:

Համագործակցության շնորհիվ մեկ այլ բացահայտում էլ կատարել ենք ՄՄ 8455 գրչագրի (Գրիգոր Նարեկացի, Մեկնութիւն երգոց երգոյն, Կ. Պոլիս (), Ժէ դ.)⁴⁶ նկարագրության ժամանակ: Այստեղ գրչի՝ Մարկոս Ջըմշկեծեկցու հիշատակարանի հետևյալ տողերը՝ «ցանկացա ուսանել զգիրս կատարեալն... ուսեալ եղէ վերակացութեամբն... բարեգործ որդի հարազատ քահանաեապետին տէր Մարտիրոսի՝ Էրեմիա Չէլէպիս...»⁴⁷ հուշեցին, որ Մարկոսը խոսում է Ժէ դարի մշակութային, հասարակական-քաղաքական գործիչ երեմիա Քյոմուրճյանի (1637-1695) և նրա հոր՝ Կոստանդնուպոլսի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Մարտիրոսի մասին: Այս տեղեկության շնորհիվ հստակեցվեց ոչ միայն ձեռագրի գրչության վայրը և մոտավոր թվականը, այլև բացահայտվեց ձեռագրում առկա այլ ձեռքով գրված 3 թերթերի (13աբ, 28ա-28բ (1-10-րդ տող), 136բ (12-րդ տողից)-137ա) գրիչը: Ենթադրությունը, որ նշված թերթերն ընդօրինակել է Մարկոսի ուսուցիչ երեմիա Քյոմուրճյանը հաստատվեց Փրզ. 338 ձեռագրի որոշ թերթերի⁴⁸ և ՄՄ 8455 գրչագրի վերոնշյալ 3 թերթերի համեմատությամբ: Փարիզի Ազգային գրադարանի նշված ձեռագրից որոշ թերթեր տրամադրեց Մատենադարանի Միջնադարյան սկզբնաղբյուրների ուսումնասիրման բաժնի⁴⁹ նախկին աշխատակից Գայանե Այվազյանը, որ զբաղվում էր երեմիա Քյոմուրճյանի կյանքի, գործունեության ուսումնասիրմամբ:

Այս բացահայտման շնորհիվ էլ այսօր Մատենադարանում ունենք ոչ միայն երեմիա Քյոմուրճյանի ինքնագիր ևս մի քանի թերթ, այլև երեմիա Քյոմուրճյանի և Մարկոս Ջըմշկեծեկցու օրինակով ուսուցչի և աշակերտի համագործակցության հետաքրքիր նմուշ:

4. Ձեռագրերի նկարագրության սկզբունքների վերանայումը՝ ժամանակի և նկարագրվող ձեռագրի յուրահատկությունների թելադրանքով:

Թեև ձեռագրերի նկարագրությունը կատարվում է տասնամյակներ շարունակ մշակված և հաստատված սկզբունքների և հարցակարգերի հիման վրա⁵⁰,

⁴⁶ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս *Ցուցակ ձեռագրաց*, հ. Բ, սյուն. 748, նկարագրող՝ **Օ. Եգաճյան**, ընդարձակ նկարագրությունը կհրատարակվի *Մայր ցուցակ ձեռագրաց*-ի համապատասխան հատորում:

⁴⁷ ՄՄ 8455, ք. 139բ:

⁴⁸ Նշենք, որ Մատենադարանում չկա երեմիա Քյոմուրճյանի ընդօրինակությամբ ամբողջական որևէ ձեռագիր:

⁴⁹ 2019 թ. վերանվանվել է «15-19-րդ դարերի հայ մատենագրության բաժին»:

